ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի N 844 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար	N 1153-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Base act (07.11.2013-till now)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2013.11.06/60(1000) Հոդ.1041
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	23.10.2013
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	28.10.2013
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	07.11.2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հոկտեմբերի 2013 թվականի N 1153-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի N 844 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության որոշ տեսակների լիցենզավորման կարգերը հաստատելու մասին» N 844 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 1-ին կետի «ա» ենթակետով հաստատված՝ մաքսային և ազատ մաքսային պահեստներում ապրանքների պահպանության գործունեության լիցենզավորման կարգում՝

ա. ուժը կորցրած ճանաչել 8-րդ կետի «զ» ենթակետը, իսկ 8-րդ կետի վերջին պարբերությունից հանել «զ» տառը,

բ. ուժը կորցրած ճանաչել IV, V և VI բաժինները,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին կետով.

«4.1. Լիցենզիայի տրամադրումը, լիցենզիայի հայտի մերժումը, լիցենզիայի վերաձևակերպումը, լիցենզիայի գործողության կասեցումը, դադարեցումը և լիցենզիայի հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:».

2) որոշման 1-ին կետի «բ» ենթակետով հաստատված՝ մաքսային փոխադրողի գործունեության լիցենզավորման կարգում՝

ա. ուժը կորցրած ճանաչել IV, V և VI բաժինները,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին կետով.

«3.1. Լիցենզիայի տրամադրումը, լիցենզիայի հայտի մերժումը, լիցենզիայի վերաձևակերպումը, լիցենզիայի գործողության կասեցումը, դադարեցումը և լիցենզավորման հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:».

3) որոշման 1-ին կետի «ժբ» ենթակետով հաստատված՝ մաքսային հսկողության տարածքի կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգում՝

ա. ուժը կորցրած ճանաչել IV, V և VI բաժինները,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9.1-ին կետով.

«9.1. Լիցենզիայի տրամադրումը, լիցենզիայի հայտի մերժումը, լիցենզիայի վերաձևակերպումը, լիցենզիայի գործողության կասեցումը, դադարեցումը և լիցենզավորման հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2013 թ. հոկտեմբերի 28
Երևան